ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ - 728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով

կարգադրում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից ՀՀ դպրոցականների 2012-2013 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլում հաղթող ճանաչված և հանրապետական փուլին մասնակցության երաշխավորված աշակերտների անվանացանկը ըստ առարկաների՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14 հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից ՀՀ դպրոցականների 2012-2013 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլում հաղթող ճանաչված և հանրապետական փուլին մասնակցության երաշխավորված աշակերտների մասնակցության ապահովումը հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ Հ. Սաֆարյանին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ Ժ/Պ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ